



Very Reverend Father Muron Aznikian

Very Reverend Father Muron Aznikian was born in Lebanon in 1957 with the baptismal name Vahe.

He received his primary education at the Apkarian School and was a member of the St. Mary Church Choir.

After graduating from elementary school, he was accepted at the Armenian Theological Seminary in Antelias where he completed the eight year curriculum for celibate priesthood, and was ordained a Deacon in 1976. To further his education, he attended the Near East School of Theology and was ordained into the sacred order of the priesthood and renamed Father Muron, in 1980. In 1983 he received the degree of Vartabed, or doctor of the church.

He taught at the theological seminary and Apkarian High School, and also served as the Dean of the Antelias Sunday School, chairman of the religious educational council, and advisor to the Armenian Church University Students Association.

In 1988 Father Muron was assigned Dean of Holy Martyrs Armenian Apostolic Church in Encino. Under his dynamic leadership, the choir and Ladies Auxiliary of Holy Martyrs Church were reorganized and the Sunday School was reopened. It was through his efforts that the Armenian Church Youth Association was started with the express purpose of instilling Armenian Christian values to the youth and young adults of the San Fernando Valley. In addition to his administrative duties, he also taught 7th –12th grades at Ferahian Armenian Day School, and to further his own education attended Pierce College, where he studied the English, politics, and psychology.

In 1990, he was assigned Dean of Holy Trinity Church in Fresno. During his tenure there, he administered to the various needs of the Fresno community, and in particular met the varying spiritual, religious, social, and educational demands of the parish with diligence and tireless service. Through his efforts, numerous programs were either established or enhanced.

In 1995, Father Muron was elevated to the Rank of Supreme Archimandrite, Dzayrakouyn Vartabed, by then Prelate His Eminence Archbishop Datev Sarkissian.

In 1998, His Holiness Aram I, Catholicos of the Great House of Cilicia, appointed him Spiritual Advisor of the Armenian Church University Students Association and Superintendent of the Armenian Sunday Schools. In addition, he

taught English and Old Testament Backgrounds at the Theological Seminary in Bikfaya-Lebanon.

At the encouragement of His Holiness, Father Muron attended the Pittsburgh Theological Seminary, and in 2000 obtained a Masters degree in Theology and Biblical Studies (STM). During his last year at the Seminary, he served as Pastor in South Florida and as visiting clergy in various Prelacy communities. He was later assigned Dean of St. Illuminator's Cathedral in Manhattan, New York, by His Eminence Archbishop Oshagan Choloyan Prelate.

In August of 2005, by the request of His Eminence Archbishop Moushegh Mardirossian, Prelate, Father Muron was assigned to serve in the Western Prelacy. His duties included providing for the various religious, spiritual, and educational needs of the Western Prelacy by enhancing and promoting Christian education within the parishes of the Prelacy. His work encompassed Prelacy day schools, Sunday schools, Youth Groups, Adult spiritual education, Bible Study classes and the publication of the Prelacy's periodical the Spiritual Spectrum.


Since his early childhood Fr. Muron has been interested in Armenian Literature and has published a poetry book and many other religious articles and books.

H.E. Archbishop Moushegh Mardirossiann, Prelate, and the Religious and Executive Councils appointed Very Rev. Fr. Muron Aznikian the Dean of Holy Cross Cathedral in Montebello.

Fr. Muron began his new mission on August 1st, 2013.

Գերապատի Տէր Միւռն
Ծ. Վարդ. Ազնիկեան

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԻԾԵՐ



Գերապատի Տէր Միւռն Ծ. Վարդ. Ազնիկեան, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Միաբաններէն, աւագանի անունով Վահէ Ազնիկեան, ծնած է 1957-ին, Պուրճ Համուտի Նոր Ատանա թաղին մէջ, Պէջրութ:

Նախնական կրթութիւնը ստացած է Ազգ. Արգարեան վարժարանին մէջ, միեւնոյն ժամանակ մաս կազմած է Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ դպրաց դասին:

իր Նախակրթարանէն շրջանաւարտ ընդունուած է Կիլիկիոյ Կաթողիկոսարանի Դպրեվանքի ուսանող, որուն ութամեայ դասընթացքը աւարտելէ ետք,

իբրեւ սարկաւազ եւ ազատ ուսանող յաճախած է Միջին Արեւելքի Աստուածաբանական համալսարանի դասընթացքներուն եւ 1980-ի Փետրուար 15-ին ձեռամբ Տ.Տաթևի Սրբ. Արք. Սարգիսեանի ձեռնադրուած է կուսակրօն եկեղեցական, վերակոչուելով Տէր Միւռն Աբեղայ:

1983-ին կ'աւարտէ վարդապետական աւարտաճառը, նիւթ ունենալով «Վահան Գողթնացիի Կեանքն ու Նահատակութիւնը» անունով վարքագրական ուսումնասիրութիւն մը եւ կը ստանայ վարդապետական աստիճան եւ գաւազան:

Փոքր տարիքէն հայ գիրի եւ գրականութեան, պատմութեան, մշակոյթի եւ յատկապէս Սուրբ Գրային եւ վարքագրական գրականութեան հանդէպ հետաքրքրութիւն եւ սէր ցուցաբերած, Հոգշ. Տ. Միւռն Վարդ. Ազնիկեան, ցարդ հրատարակած է բանաստեղծական հատոր մը՝ «Փշէ Պսակ Մատղաշ Հոգիներու», ինչպէս նաեւ «Կեանքն ու Նահատակութիւնը Ս. Սարգիս Զօրավարի», «Ս. Յակոբ Մծքնայ Հայրապետ», «Ս. Հռիփսիմեանց եւ Գայիանեանց Նահատակներ», «Եղիա Մարգարէ», «Լուսաշաւիղ Ակօսներ Կիրակնօրեայ Խորհրդածութիւններու», «Եղեռնը եւ Հայ Կղերականներու Կորուստը», «Քրիստոնէական Ճշմարտութիւններ Աւետարանի Առակներու Ընդմէջէն», «Քրիստոնէայ Հայ Ընտանիք եւ Քրիստոնէական Դաստիարակութիւն», սուրբ գրային եւ կրօնական բովանդակութեամբ գրքոյկներ եւ ուսումնասիրութիւններ:

Դպրեվանքէ շրջանաւարտ՝ դասաւանդած է դպրեվանքի եւ Ազգ. Արգարեան եւ Եղիշէ Մանուկեան վարժարաններէ ներս: Եղած է Մայրավանքի կիրակնօրեայի Տեսուչ եւ Կրօնական Դաստիարակութեան Խորհուրդի Ատենապետ եւ ՀԵԿԴՕՄ-ի (Հայց. Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու Օժանդակ Միութիւն) հոգեւոր խորհրդատու, ինչպէս նաեւ

ՀԵՀՈՄ-ի (Հայց. Եկեղեցույ Համալսարանական Ուսանողներու Միութիւն) Հոգեւոր Վարիչ:

Ամերիկայի Արեւմտեան Թեմի Սրբոց Նահատակաց Եկեղեցույ Հոգաբարձութեան պահանջքով եւ Ազգ. Վարչութեան որոշումով Հոգշ. Հայր Սուրբը Մայիս 1988-էն սկսեալ նշանակուած է իբրեւ Հոգեւոր Տեսուչ Սրբոց Նահատակաց Հայց. Առաքելական Եկեղեցույ:

Մայիս 1988էն Նոյեմբեր 1990 Հայր Սուրբը որպէս Հոգեւոր Տեսուչ կը ծառայէ Սան Ֆերնանտո Հովիտի շրջանի Ս. Նահատակաց եկեղեցույ, ուր կ'ունենայ երկամեայ բեղուն եւ եկեղեցաշէն գործունէութիւն:

Ֆրէզնոյի Ս. Երրորդութիւն Մայր Եկեղեցույ Հոգաբարձութեան խնդրանքներուն ընդառաջելով, Արեւմտեան Թեմի Բարեջան Առաջնորդ՝ Տ. Տաթեւ Սրբ. Արք. Սարգիսեան Դեկտեմբեր 1, 1990ին Հայր Սուրբը կը նշանակէ Հոգեւոր Տեսուչ Ս. Երրորդութիւն Մայր Եկեղեցույ:

Առ ի գնահատանք Հոգշ. Տ. Միւռոն Վարդապետի կրօնական եւ հոգեւոր իրագործումներուն եւ եկեղեցանուէր բեղուն աշխատանքներուն՝ 19 Նոյեմբեր 1995ին, ձեռամբ Տաթեւ Սրբազանի՝ կը ստանայ Ծայրագոյն Վարդապետի աստիճան:

1998 ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ հայրապետը զինք կը նշանակէ Վարիչ Տնօրէն Կիրակնօրեայ վարժարաններու եւ Հոգեւոր Խորհրդատու Հայ Եկեղեցույ Համալսարանական Ուսանողներու Միութեան (ՀԵՀՈՄ):

20006ին կը հետեւի Բիթսպրիկի Աստուածաբանական համալսարանի դասընթացքներուն եւ կը ստանայ Աստուածաբանութեան եւ Ս. Գրային Գիտութեանց Մագիստրոսի S.T.M. աստիճան եւ վկայական:

Մօտաւորապէս տարի մը կը ծառայէ Արեւելեան Թեմի Ֆլօրիտայի հայ համայնքներուն, ինչպէս նաեւ որպէս այցելու հովի առիթ կ'ունենայ հերթաբար այլ գաղութներ ալ այցելել:

1 Նոյեմբեր 2001-էն սկսեալ, Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թեմի Բարեջան Առաջնորդ՝ Բարձրշ. Տ. Օշական Սրբ. Արք. Չոլոյեան, Գերպ. Տ. Միւռոն Ծ. Վարդ. Ազնիկեանը կը նշանակէ Հոգեւոր Տեսուչ Նիւ Եորքի Ս. Լուսաւորիչ Մայր Տաճարի:

Օգոստոս 2005-էն սկսեալ, Արամ Ա. Կաթողիկոսի տնօրինութեամբ եւ Արեւմտեան Թեմի Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք Մարտիրոսեանի հրաւերով, Արեւմտեան Թեմի Ազգ Առաջնորդարանէ ներս հոգեւոր ծառայութեան կը հրաւիրուի: Այս շրջանին, անոր ծառայական աշխատանքին հիմնական դաշտերը եղան Ազգային Առաջնորդարանը, մեր Ազգային Վարժարանները եւ Ազգ. Առաջնորդարանի հովանիին տակ տարուող Քրիստոնէական Դաստիարակութեան, Կիրակնօրեայ վարժարաններու ու Երիտասարդական Միութեանց կալուածները, Ազգային Առաջնորդարանի պաշտօնաբերքի հրատարակութիւն, ինչպէս նաեւ ծխական շրջաններուն մէջ Սուրբ գրային դասընթացքներ կազմակերպելու աշխատանքները:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան եւ
Կրօնական Ժողովի ու Ազգային Վարչութեան Խառն Ժողովը Գերապատիւ
Տ. Սիրոռն Ծ. Վրդ. Ազնիկեանը կը նշանակեն Մոնթեպելլոյի Ա. Խաչ Մայր
Տաճարի Հոգեւոր Տեսուչ:

Հայր Սուրբը իր նոր պաշտօնը ստանձնեց 1 Օգոստոս 2013ին: